

Հարկան զինը 10 բուրլի, կէս տարվանը 6 բուր-
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խաղաղաստան մէջ.

Մեր հասցէն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Redaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խորանայիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրկին պոլիտիկական մասին. — Ներքին Տե-
ստիօթիւն. Գաղթականների վերադարձը. Բարձ-
րագոյն զարգացումը Կովկասում. Մրցումն նաւթային
գործերի մէջ Սովետների օգտին. Նամակ Զան-
գեզուրից. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻՖԻՆ. Համալսա-
րաններ Անգլիայում. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒՍ-
ԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ամերիկայից.

ԿՐԿԻՆ ՊՈԼԻՏԵՍԻԿՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսում պոլիտիկական հիմնելու
հարցը. — օրվայ հարց է մեր քաղաքում.
Թէ մամուլը, գլխավորապէս «Մշակ» և
«Новое Обозрение» լրագրիւնները, որոնք վա-
ղուց արդէն յարուցել և պաշտպանում են
պոլիտիկական հիմնելու խնդիրը, թէ
քաղաքային դոման, և թէ վերջապէս
Գիւղատնտեսական ընկերութիւնը, որոնք
առանձին յանձնաժողովների ձեռքով մշա-
կում են այդ խնդիրները. — եռանդուն կեր-
պով զբաղված են այդ հարցով, ի նկատի
ունենալով, որ մինչևս Երմոլով շատ շու-
տով Թիֆլիս է լինելու, և ուրեմն մինչևս-
րի միջոցով, բարձր կառավարութեանը դի-
մումն անելու ամենապարզ միջոցն է.
Պոլիտիկական հարցը տեղական մամու-
լից անցել է արդէն և մայրաքաղաքների
լրագրութեան մէջ, որի ամենահամակրելի
օրգանները մէկը, «Русскія Вѣдомости»
մի առաջնորդող նուիրելով Կովկասի անտե-
սական զարգացման գործին, կանգ է առ-
նում պոլիտիկական վրա, իբրև ամենա-
յարմար բարձրագոյն զարգացող Կովկասի
համար: «Մշակ» այս համարի մէջ առաջ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Ուստի, օգոստոսի 15-ին
Նոր աշխարհը իր գնահատան ընկերական, քա-
ղաքական և կրօնական երևոյթներով առատ
նկւթ կը մատակարարէ հետաքրքիր դիտողին
համար: Պիտի ջանանք, որքան մեր ոյժերը
թող կը տան, նոր աշխարհի մէջ ստացած տպա-
ւորութիւնները հարգողը չի կրնար ընթերցողաց,
և մեր այս առաջին նամակով կը խօսենք այս-
տեղի իրական սեռի մասին:

Ուշիկնկթնդի ազատած երկրին մէջ կանայցի
հանձարին և ճարտարութեան առջև բաց են առ-
հասարակ գրական, կրթական, առևտրական և
ճարտարապետական ամեն ասպարէզներ: Ամե-
րիկային իր յարատե անկումն կամքով, գեղեցիկ
սեռին յատուկ տոկոսներով, ինքզինքը հաւասար
մրցակից հռչակած է այր մարդուն. այժմէն իսկ
սկսած է նաև ի վէճ գալ քաղաքական ասպարէ-
զին մէջ իր դարաւոր բռնաւորին հետ: Կարծես
գեղեցիկ ճակատներու ետև ալ նոյնքան իրաւանց
գիտակցութիւն, փափուկ լանջերու տակ ալ
նոյնքան փառասիրութիւն կայ պահուած, որքան
խորշուած ճակատներու կամ մաշած կուրծքերու
տակ... Ինչ պիտի լինի մեր տղամարդկանց վի-
ճակին, երբ աշխարհի ամենէն գեղեցիկ բանակն
արշաւէ ծերակոյտներով և խորհրդարաններով, երբ
քաղաքական բեմերու վրայէն անընդհատ հնչել
սկսի մանկան օրբանին քով երգող հրեշտակին
ձայնը: Ինչ որ ալ լինի ապագան, ամերիկայէն
որոշած են օր մը երկայն մաղերով Բիսմարկներ
ու Վրտաթմաններ ունենալ քաղաքական աշխարհի
մէջ: այդ նպատակաւ լրագրիւնը կը հրատարակ-
վին, ժողովներ կը կազմուին, պաշտօնական և
անպաշտօն դիմումներ կը ներկան, յայտարարութիւն

ներ բերում ազատամիտ ուսու լրագրի կար-
ծիքները գլխաւոր կէտերը:

Մենք կարիք չենք տեսնում կրկին ան-
գամ կանգ առնելու պոլիտիկական կաղ-
մակերպութեան և զանազան բաժանմունք-
ների վրա, քանի որ «Մշակ» № 87-ի
մէջ արդէն տպագրված է մի հեղինա-
կաւոր անձի, պրօֆէսոր Անդրէաս Ար-
ծրունու մանրամասն յօդուածը այդ մասին,
և քանի որ թէ քաղաքային դոման և թէ
Գիւղատնտեսական ընկերութիւնը պատ-
րաստվում են մինիստրին ներկայացնելու զե-
կուցման մէջ, որքան կարելի է մանրամասն
կերպով, պատճառաբանել թէ պոլիտիկան-
կումի հիմնարկութեան կարևորութիւնը և
թէ այն բաժանմունքները, որ ցանկալի է
տեսնել այդ բարձրագոյն զարգում, մեր
երկրի մէջ:

Մեզ մնում է միայն, այս օրակէս, երբ
թէ գրական շրջաններում, թէ քաղաքային
խնդրակարգութեան մէջ, և թէ մամուլում
գիւղատնտեսների շրջանում այդ հարցը
բարձր է օրվայ հարց, և մեծ յոյսերի ա-
ռաւարկայ. — որից շնչալի, որ յիշատի Կով-
կասեան պոլիտիկական մի ահագին դեր
ունի կատարելու մեր երկրի անտեսական
զարգացման գործում, և զրա հետ միասին
անկեղծ յոյս տածել, որ բարձր կառավա-
րութիւնը, ականջ դնելով ազգայնական-
ութեան ջերմ ցանկութեան, կը թոյլատրի
պոլիտիկական հիմնարկութիւնը:

Ձը պէտք է մոռանալ և այն, որ ինքը
քաղաքի իր կողմից պատրաստակարգութիւն
է յայտնում օգնելու այդ բարձրագոյն զբաղ-
րոյն հիմնարկութեան, թէ փողով և թէ
նոյն իսկ հարկաւոր հող դնելով նրա արա-
մագրութեան տակ:

«Մշակ» հիմնարկութեան բարձր նշանա-

նէր կը տեղան, խոստումներ, ծրագրեր, յոյսեր
կը սփռեն ամեն տեղ, միով բանիւ տկար սեռին
ամենէն դիզագնական ջանքերն ի գործ կը դրուին
հանրաժանօթ քուէարկութեան իրաւունքն ձեռք
բերելու:

Գովելին այն է, որ այս հրեշտակային կուսակ-
ցութիւնն իր նպատակի իրագործման ամենէն
բանաւոր յոյսը դրած է իրական սեռի դատաւի-
րակութեան վրա: Սա իր մեծ օգուտներն ունի:
Օրն ի բուն շրջագրեցողի ձեռքում վրա խորհող
ուղեղները այժմ սկսած են աւելի արժանաւոր
նիւթերի մասին հոգալ. նոր սերնդեան գեղեցիկ
կէսին անուշադրութեան մասնավոր կրթութիւնը
ամենէն ուշադրաւ խնդիրներէն մին կը լինի:
Աւելցնենք նաև կին գրողների երևան գալը, որոց
գրքներու շնորհիւ կնոջ պատմական կեանքը,
զարգացման դանաղան աստիճաններու մէջ ըն-
թանական և ընկերական ջիւղը լուրջ ուսումնա-
սիրութեան ուղարկայ կը դառնան, ունենք նոյն
իսկ ընկերական մեծ վերջերու դարմանին վրա
կը խորհրդածեն: Ձը գիտենք թէ Ամերիկեան
գրքասէր երիտասարդութիւնը ինչ աչքով կը
նայի այս յանդուգն նպատակների վրա, մանա-
ւանդ երբ այս նոր մրցման շնորհիւ մի քանի
տեսակ ասպարէզներ կը փակուին իրենց առջև,
որովհետև կանայք աւելի գաղափարներ և նպատ-
կաւոր պայմաններով կ'աշխատեն: Գովելին ըն-
թացաւոր կ'ինքն կը յաջողին բարձր գիւղը բն-
նի իրը հեղինակ, զաստուտ, բժիշկ, խմբագիր,
հեռագիր և փոստի պաշտօնայ, գրագիր, հաշ-
ւապետ, արհեստաւոր և այլն և այլն...

Գեղեցիկութիւնը յարաբերական է կընեն. արե-
ւելցիք սև աչք կը սիրեն, արեւմտիկը կ'ապրտը
կը նախադասեն. մին սև գանգուրները, միւս՝ ու-
կէթը մաղերը բանաստեղծական կը դռնէ: Բայց
ընդհանուր առմամբ գեղեցիկ սեռը նոր աշխարհի
մէջ իր անուան անձագոյն արժանաւորութիւնը
ցոյց կուտայ: Այսօր ընդունուած ճշմարտութիւն

կութիւնը, — ասված է դուռնի յանձնաժո-
ղովի գեղեցման մէջ, — թերադրում է Թիֆ-
լիսի քաղաքային խնդրակարգութեան, իր ոյ-
ժերի համեմատ, զոհարելութիւն անելու.
Թիֆլիսի քաղաքային դոման, սեպտեմբերի
5-ի նիստում, որոշել է դնել մինիստրու-
թեան արամագրութեան ներքոյ՝ 100 հա-
զար բուրլի միանուագ ծախսերի համար և
մինչև 200 դեկտեմբերի 30-ը, քաղաքի
շրջականերում, որտեղ այդ յարմար կը լինի
խնտիտուտի համար:

Այդ բաւական չէ. քաղաքային դոման
իր վերջին նիստում որոշեց, եթէ հարկ
լինի, ամբողջ Կովկասում հանգանակութիւն
բանաւ ապագայ պոլիտիկական համար,
— և մենք հաւատացած ենք, որ այն բո-
ւէին, երբ կառավարութիւնը կը թոյլատ-
րի բարձրագոյն զարգացող հիմնարկութիւնը,
Կովկասի ամեն ծայրերից, մեր երկրի ազ-
գայնականութեան բոլոր դատարարները, ա-
ռանց խտրութեան կրօնի և ազգութեան,
կը շտապեն օգնութեան հասնել մի այնպի-
սի հիմնարկութեան գործին, որի լինել
կամ չը լինելը կենսական խնդիր է մեր
երկրի անտեսական զարգացման համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻՖԻՆ

ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐԶԸ

Օգոստոսի 21-ին, Կարսի նահանգապետը, քա-
ղաքից 22 վերստ հեռու գտնվող Բէնկի-Ա-
մէզ գիւղում ժողով կազմելով Կարսի վիճակի
հայաբնակ գիւղերի ներկայացուցիչներին և հայ
գաղթականներին, կամեցաւ տեղեկանալ, թէ կը
կամենային արդեօք վիճակի հայերը իրանց գիւ-

մէ, թէ խառնածին ցեղերը աւելի գեղեցիկ կը
լինին, աշխարհի մէջ քիչ տեղեր կան, ուր այս-
քան թուով ազգեր այդքան ազատ յարաբերու-
թեան մէջ լինին միմեանց հետ: Հզոր Ամերի-
կեան ողի մը ի մի կը ձուլէ Փրանսացին, գեր-
մանացին, հրէայն, իրանացին, սկովիացին,
չուէտը, իտալացին, սպանիացին:

Հայերիւթէն բերուած աւանդական սովորու-
թեանց շնորհիւ մէկ երկու սերունդ կը դիմա-
դրեն այդ հասանքին, բայց քիչ յետոյ ամենն ալ
կը լուծուին մեծամասնութեան մէջ, կորսնցու-
նելով իրենց անշատ դիրքը: Աւելցնենք նաև քա-
ղաքակրթութեան ընծայած դիւրութիւնները, ո-
րոնք անքան կը մղուման գեղեցիկ սեռի աշ-
խատանքը, բժշկական խնամքները, լաւագոյն
սնունդն ու օդը, և արա կուսենանք հարուստ և
միջին դասակարգի գեղեցիկութեան գլխաւոր պատ-
ճանները: Ասոր համար է, որ Փրանսացւոյ
պատմական Մատամ Կարիւններու, Մարի Ա-
տլէաներու, Նիւսոն տը Լամբուրներու տեղ նոր
աշխարհի ալ իր գեղեցիկութեան կուսեցին ունի —
տիկին Հէնրի Գլուուդ, տիկին Վան Բենդէր-
Բրիւնը, տիկին Լատէնպուրկ և այլն և այլն:

Այս հաշակաւ գեղեցիկներէ զատ, հրքան գե-
ղեցիկներ, մանիշակի պէս, գիւղի մը անկիւն
կը ծնին, ու կը խամրին իրենց փոքր շրջանին
մէջ միայն ծաւալով իրենց բոլոր Բանտերների
աղքատ դասակարգն ալ լիովին գուրկ չէ հրեշ-
տակներու ներկայութենէ, երբեմն պարզ հանդերձ-
ներու մէջ հնաշխարհիկ գեղեցիկութիւն մը կը
պահուի, որ զիտողին վրա՝ խոնավ, անշուք
խրճիթ մը խորը թափանցող մոլորեալ ճառա-
գալի մը տպաւորութիւնը կընէ: Նոր աշ-
խարհի գեղեցիկներն շատ բանաստեղծներ են
օգնութիւ, մինչ իսկ ծերունին Նուիթլըր ալ իր
ստաւած անդամներու մէջ երիտասարդական ա-
րեան եռալն կը զգար տեսնելով գեղջկուհին, ո-
րին երգեց իր անմահ «Մօտ Միւրը»-ին մէջ.
Լոնկֆէլտն ալ նոյն գեղջուկ գեղեցիկուհու մէջ

ղերում ընդունել գաղթականներին և բաժին հա-
նել նրանց իրանց հողերից, թէ ոչ: Բայց բա-
ցատական պատասխան տուին, բացի մէկ գիւղի
ներկայացուցիչներից:

Այնուհետև նահանգապետը յիշեցրեց գաղթա-
կաններին, որ Կարսի վիճակում ազատ հողեր
չը կան, ուստի գաղթականները կամ պէտք է
վերադառնան իրանց բուն բնակատեղին՝ Թիւր-
քաց Հայաստան, կամ իրանց համար տեղ ընտրեն
մի քանի տեղերում, ինչպէս Անդրկասպեան երկ-
րում, Սիբիրիայում, Ան ծովի ափերում և այլն:
Դրանից մի քանի օր յետոյ Կարսում լուր տա-
րածվեց, որ Թիւրքաց այստեղի հիւպատոսը յայտ-
նել է, որ գաղթականները իրաւունք չունեն հայ-
րենիք վերադառնալու, որովհետև Թիւրքիան այլ
ևս չէ կամենում դրանց հալածանքներ ճանաչել:

Այդպէս ուրեմն, Թիւրքաց կառավարութիւնը
փոխանակ աշխատելու և օգնելու, որ իր հպա-
տակ գաղթականները իրանց երկրի վերադառ-
նան, ինքն իր կողմից, ընդհակառակը, աշխատում
է նրանց ցրել ու ցան անել և վերջնական թշուա-
ռութեան մատնել:

Ուրեմն ինչ պիտի լինի այդ թշուառների վի-
ճակը: Չմեզը գալու է: Հայրենիք վերադառնալը
անհնարին է: Ոչ օգնող կայ, որ վերադառնան, և
ոչ թողաւորոյ. — Կարսի նահանգի հայերը, եթէ
անկեղծ որտեղ կամենան էլ, անկարող են այս
տարի ապաստան տալ իրանց գաղթական եղբայր-
ներին, որովհետև անցեալ տարի հաղիւ պահեցին:

Ազատ հողեր չը կան Կարսի կողմերում, որտեղ
այժմ գտնվում են գաղթականները, և որտեղ բը-
նակութիւն հաստատուելը կրնայական և մի քանի
ուրիշ՝ անտեսական յարմարութիւններ ունի:

Իսկ բնակութիւն հաստատել Սիբիրում, կամ
Անդրկասպեան երկրում գաղթականները ոչ կա-

տեսած էր իր հրեշտակային խմբակները: Նոյն իսկ
Ամերիկայի ամենէն լուրջ դիւտորական-քաղա-
քական մարդը՝ Ուոլինկլէն անդալ չէր միացել
կանացի ներշնչման, իր երիտասարդական հասա-
կին մէջ մի քանի տող ոտանաւոր նուիրելով իր
պաշտած ամերիկեան յիշատակին:

Անցեալները ամերիկեան ամառային մէջ մի
տեղացի հեղինակ մը, չը գիտենք մը հրեշտակ-
մուսային ներշնչեալ, բանաստեղծական ոգևորու-
թեամբ կը նկարագրէր ամերիկեան այտերու, աշ-
քերու և քիթերու անհամեմատ առաւելութիւնը,
որոց յառաջ բերած այնքան հրաշալի գեղեցկու-
թեան համար շնորհակալութիւն կը յայտնէր
Ատուուուին, որ բարեհաճէր է իր հրեշտակներէն
մի քանի այս ցաւոց աշխարհը դրին՝ մեր այս
դառն կեանքը քաղցրացնելու:

Իր դիրքին բերմամբ և միջավայրին ազդեցու-
թեամբ 19-րդ դարու հարուստ կիւրք աստիճանաւ.
մը ստիպված է մշակութենէ գուրկ չը թողուլ իր
խմայական կարողութիւնները. միջին դասակարգի
կինը, կեանքի պայքարին մէջ լաւ կուսելու համար,
պէտք ունի բարձր կրթութեան: Ընկերական առ-
դի պայմաններու պահանջն է կնոջ դաստիա-
րակութիւնը, նոր աշխարհի մէջ խիստ է այդ
պահանջը. ամերիկային կամայ աւանդ պարտի
համակերպիլ այդ պահանջին, առանց որոյ իր երա-
զած բարձրութեան չը հասնելէ զատ, իր ներկայ
գիրքն իսկ կրնայ փոսնալ: Ֆրանսացի աւա-
ղանակ մը, վերջերս Ամերիկեան այցելելէ յե-
տոյ՝ հիացմամբ կը խօսէր Բոստօնի և Նիւ-Եորքի
աղուսակներու շրջանի կանայք մասին, որք,
կըսէր, կէտ առ կէտ կը հետեւին Եւրոպայի և մաս-
նաւորապէս Պարիսի իմացական զարգացման,
որի վերջին տասնամեակին պատմութիւնը շատ
տեղեր լսեցի մանրամասն ճշգրտութեամբ:

Սակայն ցաւալին այն է, որ այս ամենն բարեկե-
ցիկ և հարուստ դասակարգին միայն կը պատկանի:
Կինը, իբր գործաւորների գուրկ է խմացական մշա-

րող են, և ոչ էլ ցանկանում են: Այդ հեռավոր, իր բոլոր պայմաններով թիրազաց-Հայաստանի բնակիչներին անմատչելի երկրում՝ գաղթականը ոչ թե չէ կարող ապաստարան գտնել, այլ բոլորովին կը թշուառանայ, կը ունչանայ:

Ուրեմն ինչ անեն այդ թշուառները, ուր գնան, ուր դիմեն: Իսկ ձմեռը արդեն մոտ է, զույգը հանգստացնելու մի անկիւն է պէտք, իսկ հրե-խաները սովից ազատելու համար հաց: Սակայն ոչ մէկը կայ և ոչ միւսը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մօսկվայի «Русск. Вѣдомости» լրագիրը մի առաջնորդող է նուիրել մեր քաղաքում հիմնվելի պոլիտեխնիկական ինստիտուտի հարցին, որի հետ մենք քաղաքապետին կը ծանօթացնենք ընթերցողներին:

«Ռուսաստանի զանազան մասերից, ուր անհրաժեշտ և ժամանակակից կը լինէր հիմնել մասնա-գիտական բարձրագոյն դպրոց, մասնաւոր աչքի է ընկնում Կովկասը: Ո՛վ չը գիտէ, որ Ռուսաստանի այդ մասը ներկայացնում է կատարելագոյն առանձնացած, ինքնուրոյն և փակված մի աշխարհ: Այդպէս, համեմատաբար փոքրիկ տարածութեան վրայ, կենտրոնացած են բնութեան բոլոր հրաշքները, պատմական բոլոր դասակարգութիւնները, ժողովրդական տնտեսութեան բոլոր աստիճանները: Մենք մինչև այժմ շատ քիչ բան գիտենք այդ աշխարհի մասին, շատ քիչ ենք գնահատում նրան: Այն ինչ այնտեղ ծածկված են անսպառելի բնական հարստութիւններ, որոնք անդադար լոյս աշխարհ են հանձնում պատահմամբ այդ երկիրը գնացող ճանապարհորդներին ձեռքով: Նրա հողը և կլիման ընդունակ են տալ այնպիսի արդիւնքներ, որոնք մինչև այժմ հեռու երկրների նախանձելի արտոնութիւնն էին կազմում: Բաւական է մասնացոյց անել բամբակի և թէյի վրայ, միտք բերել այդ գործութեան և բանջարանոցային արդիւնքները, յիշել խաղողի և գինիների բազմատեսակութիւնը և բարձր արժանաւորութիւնը, և այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչ կարող է տալ այդ բարեբեր երկիրը, երբ լսելայի կերպով մշակվին նրա բնական բերքերը: Այն ինչ մինչև այժմ զժողովրդարար, Կովկասում աւելի է տիրապետում

բուսական, քան թէ մեզ մօտ: Վերջինք թէ երկրա-գործութիւնը, թէ այգեգործութիւնը, թէ գինեգործութիւնը, ամեն տեղ արդիւնքների գերազանց յատկութիւնը փայտում է անփոքր մշակութեան պատճառով: ամեն տեղ արդիւնքների մեծ մասը կորչում է՝ նրանցից օգուտ քաղել չը կարողանալու պատճառով: ամեն տեղ յայտնի հետեանքին հասնելու համար անհամեմատ աւելի մեծ աշխատանք է գործ դրվում, քան թէ հարկաւոր կը լինէր, եթէ արդիւնահանութեան գործը կանոնաւոր լինէր դրված: Տեխնիկայի յատկանշական գիտաւթարկ կրթված մարդկանց պակասութիւնը և այնպիսի մի ինտելիգենտ կենտրոնի բացակայութիւնն է, որից կարող լինէին բոլորի և տարածվել նոր գաղափարներ: Թիֆլիսում գիւղատնտեսական և լեռնային բաժանմունքներով պոլիտեխնիկական ինստիտուտ հիմնելը, որպէս այդ խնդրում է այնտեղի դուստն, կը տայ Կովկասին մի այդպիսի կենտրոն:

«Մասնագիտական բարձրագոյն դպրոցի գոյութիւնը, կենտրոնացնելով մէկ տեղում գիտութեան շատ ներկայացուցիչներին, անպատճառ կը նպաստի երկրի աւելի ընդարձակ ուսումնասիրութեան գործին, միտք կը տայ շահագործելու բնական հարստութիւնները և կօշնի իսկապէս այդպիսի դաղափարների իրագործմանը: Բայց այդ քիչ է: Ուշի ուշով քննելով Կովկասի առանձնաշատ կոթիւնները, չէ կարելի այն եզրակացութեանը չը դալ, որ արդիւնաբերական նոր ձեռնարկութիւնների շնորհիւ կարելի է նրանց համար հէնց բուն իրանց երկրում տիրանիլներ պատ-րաստելուց: Ամենից առաջ Կովկասի բնութիւնը և կենսը խիստ շատ առանձնաշատ կոթիւններ ունեն, որոնց անպատճառ պէտք է ի նկատի առնել դաստաւարութեան ժառանգի: Իսկ այդ ան-բազմաբնույթ է մի այնպիսի կենտրոնական դպրոցում, որը աչքի առաջ ունի ամբողջ, ահագին երկրի շահերը, և անխուսափելի կը լինի, երբ բարձրագոյն դպրոց հիմնվի, օրինակ, Թիֆլիսում:

«Բայց դրանից, հէնց արդիւնաբերական գործերի առաջ վարելը, որիչ հաւասար պայմանների ժամանակ, աւելի աջողութիւն կունենայ տեղացի մարդու ձեռքում: Կովկասեան բանւոր ազգայնա-կութեան ազգային բնաւորութիւնը, լեզուն, բար-բերը, աշխարհայեցողութիւնը արեւմտ ինքնօրինակ են, որ այդ երկրում չը մեծացած մարդուն շատ սկզբնական կը լինի Կովկասի լեռնային կոթիւնը, չը ինչ կորով, չը նորս, աղետութիւն և փափկութիւն կար իր ձայնին չհետեւում և դաղափարաց մէջ: Երբեմն ներկայ ընկերական վիճակն զժող, երբեմն տխուր, լա-լազին կողմար այնքան արտասուաց, այնքան վշտեցում վրայ, որ մարդկութեանն անտես մնացեր են: Գնակարծ կարծես դարձելով կատաղած՝ անձը կորուստ, իր ճարտարանութիւնը հեղեղ մը կը դառնար, կարծես նա յաւիտեական պայքար իր դառնած լինէր: Մարդկային յառաջագործութեան արդեւը հանդիսացող խոշորաներու գէմ: Կե-ցած տեղս հմայված մնացեր էի...»

Նոր աշխարհի մէջ տկար սեռին բարձրացումը շատ արագ է եղած համեմատաբար: այս կը ցուց-նէ վերջին 40—50 տարիներու պատմութիւնը: Այս հաստատելու համար անպարար չը լինէր, եթէ վերջաբանի տեղ մի քանի կէտեր յիշենք նշանաւոր ամերիկացու այս մի կենսաբան Մարիլիայի քննող սեռին զարգաց-ման պատմութիւնը կրնայ համարուի: Միս Լու-սի Սթոն, «Մայր Արաքսին» գրագէտ թարգման-չուհուն մայրն է, այն նշանաւոր կինը, որոյ աղ-նիւ կենսաբան, բարձր մտածողաբար զինք աշխար-հի մեծանուն կանանց կարգը կը դասեն: Լուսի Սթոն ծնած է 1818-ին Մասաչուսեց նահանգի գիւղերէն միոյն մէջ. երկրագործ ընտանեաց գա-ւակ լինելով, մանուկ ամերիկացին հազիւ կրցաւ գիւղացի աղջկան մը պարզ կրթութիւնը ստա-նալ: Բայց իր բնատուր ձկնաբեր զինք կը մղէին զէպ բարձրագոյն կրթութիւն: Օր մը իր այս փա-փաքը ծնողացը յայտնեց, հայրը զայրացած «այս աղջիկը լսենք է, ինչ է», բացականչեց, այնքան արտասուով էր այն առեւն աղջկան մը գոյնջ գը-նալը: Ամբողջ Ամերիկայի մէջ միայն մի գոյնջ գիւղացի սեռէն ուսանող կնիքուհի: Փոքրիկ ստաճակ Լուսին որոշած էր, նոյն իսկ հաղաւթի իր հօր կամքին, իր նպատակն իրագործել: Ինք-նօգնութեամբ ստացած ուսման չնորձի վերջա-

գիւտար է յարմարվել նրանց, իսկ առանց դրան հեռ է սխալներ անել և փչացնել մինչև անգամ լաւ մտածված գործը, ընդհակառակն այդ բոլոր թանգ նստող փորձը ինքն իրան է տրվում:

«Չէ կարելի ուշադրութեան հառնել և ուսանող երիտասարդութեան շահերը: Կովկասում, ոչ պա-կաս քան մնացած Ռուսաստանում, երիտասարդ սերունդը անընկճելի ձգտում ունի դէպի բարձրագոյն դպրոցը, գիտութեան հետամուտ երիտասարդ մարդիկ ահագին խմբերով դիմում են այժմ մայ-րաքաղաքները: Սակայն արժէ մտածել, թէ որ-քան թանգ է նստում այդ ձգտումը: Չը խօսելով արդէն ներկայիս գոհաբերութիւնների մասին, որոնք անխուսափելի կերպով մեծանում են՝ մայ-րաքաղաքների հեռավորութեան պատճառով, մենք հրաւիրում ենք յիշել, թէ երիտասարդ սերունդը որպիսի կռիւ է ստիպված լինում մղել կլիմայի դէմ, թէ որքան երիտասարդ ոյժեր տարածում մահ են գտնում այդ անհաւասար կռիւ մէջ:

«Եթէ ուշադրութեան առնենք բոլոր վե-րև ասածները, չէ կարելի կատարելալ աշո-ղութիւն չը ցանկանալ Թիֆլիսի քաղաքային դուստրի միջնորդութեանը, որը պէտք է, երկրա-գործութեան միջոցաւ միջոցով, առաջարկվի բարձր իշխանութեանը: Մայրաքաղաքներից հեռու լինելը, երկրի չափազանց առանձնաշատութիւնը, բնական բերքերի առատութիւնը և նրանց կա-տարալպէս անբաւարար շահագործութիւնը—այդ բոլորը Թիֆլիսին երկրի ուրիշ տեղերից աւելի իրաւունք է տալիս յուսալ, որ կիրառործվի իր վաղուցվայ ցանկութիւնը՝ այն է բարձրագոյն մասնագիտական դպրոց ունենալ: Շատ կարելի է ոչ մի տեղում նոր բարձրագոյն դպրոցի հիմնա-կութիւնը չէ խոստանում այնքան շատ բարեբար հետեանքներ, որքան հէնց Կովկասի կենտրոնում:

ՄՐՅՈՒՄ ՆԱԽԹԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՐԻ ՄԷՋ

Կերտիւնագործների դաշնակցութեան արտա-սանձանեան գործակալները՝ Նօրէլ, Բօտչիլը և Մանթաշան, ինչպէս լսում ենք, արդէն համա-ձայնութիւն են կայացրել և արտասանման շու-կաները իրար մէջ հետեակ կերպով բաժանել: Նօրէլին յանձնված է հիւսիս—արեւմտեան Եւրո-պայի երկրները, Մանթաշանին՝ Միջերկրական ծովի ափերը և Բօտչիլըին՝ Ասիայի և հեռու ա-րևելքի երկրները:

պէս յաջողեցաւ իրենց դիւղին ուսուցչուհի ընտր-ւել, ուր աշխատեցաւ մինչև 25 տարեկան հա-տակը, երբ իր ինայութեամբ աւելցուցած փոքրիկ գումարին հետ ձաքայ ելաւ դնալ Օհիո, ուր մի-այն սեւեր ու կիներ կրնային կրթուիլ:

Հոն ծայրայեղ աղքատութեան և չքաւորու-թեան մէջ յարստե ջանքով շարունակեց իր ու-սումը, շատ առեւ չոր հացով ապրելով, մինչև որ 29 տարեկան հասակին մէջ աւարտեց գոյնջին ընթացքը: Ուսմանը մէջ իր ստացած բարձր ա-տիճաններուն համաձայն պէտք էր, որ վերջին ձաւ մը կարգար հրապարակաւ, բայց այս պա-տիւն ալ զրացան իր Եւային սեռին պատկանե-լուն համար...

Նօրտի ամերիկացին, առանց վճարելու, նոյն եռանդով մտաւ կենսաբան դպրոցը, ուր աւելի մեծ գործերու ասպարէզներ իրեն կը սպասէին. նա մտաւ աշխարհը իրը հետեղ նոր գաղափարներու: Այն օրերը ճորտերի աղաւթութեան լնդղղը կը յուղուէր Ամերիկայի մէջ. նա իր ամբողջ հոգով յարեցաւ սեւերու արդար դատին, իր մտքին բո-վանդակ կարողութիւնը, սրտին ամեն զգացում-ները, լեզուին ամբողջ ճարտարութիւնը նուիրեց մարդկութեան մի տառապեալ ստրուկ մասին փրկութեան սուր գործին: Մոռցած իր անձ-նական գործերը, սկսաւ գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք շրջել, հասարակաց կարծիքը յուղելու իր կրակոտ առեւաբանութիւններով:

Իր այս առաքելութեան միջոցին նոյն իսկ իր սեւեր արդեւ չէր կրնար լինել և ոչ ալ պատ-կանաւոր աղղղը շարք մը մարդոց, որ ամեն տեղ գիւղ ծաղրանքի և հեղութեան առարկայ կընէին: Օր մը, տեղի մը երեքէն խնդրեց, որ ծանուցանէ ժողովրդեան իր առեւաբանութեան ժամանակը: Պատուարժան եկեղեցականը հետե-ւեալ բառերով կատարեց օրերդին փափաքը: «Այ-սօր ժամը այս ինչին, հաւ մը պիտի փորձէ աք-լորի պէս կանչել, ով որ այդ տեսակ երգի կա-խորժի, կրնայ այս ինչ տեղը ներկայ գտնուիլ...»

Վերջին ժամանակներս նրանց գործունէութեան մասին շատ աննպաստ լուրեր էին պտտում թէ մեմուլի մէջ և թէ մասնաւոր շրջաններում: Պատ-մում էին, որ իր թէ նրանք արդէն մի քանի տեղ սկսել են իրար հետ մրցել:

Ով լաւ ծանօթ է դաշնակցութեան պայմանա-գրին, չենք կարծում, որ առանց ծիծաղի կա-րողանար լսել այդ տեսակ անմիտ լուրեր: Չէ որ դաշնակցութիւնը կազմված է հէնց նրա համար, որ վերացնվի մրցումն միմեանց մէջ: Չէ որ հէնց այդ միտքն է կաղում դաշնակցութեան հիմքը:

Բայց և այնպէս մենք հաւատացած էինք, որ անպատճառ մի թիրախացութիւն պէտք է լինի այստեղ, և մեր հաւաքած տեղեկութիւնները ահա թէ ինչ են պարզում մեզ համար:

Սերբիայի կառավարութիւնը՝ կամենալով մեռ-ցնել իր երկրում կերտուի միմեմառութիւն (մոնօպօլիա), դիմել է մեր դաշնակցութեան ար-տասանմանեան գործակալներին, խնդրելով իւրա-քանչիւրից առանձին-առանձին նշանակել՝ թէ արդեւ ինչ գնելով կարող են, մի օրոյ ժամա-նակամիջոց, կերտին տալ՝ ամբողջ Սերբիայի պահանջը լրացնելու համար: Գործակալներից իւ-րաքանչիւրը բոլորովին չիմանալով, թէ մի այդ-պիսի առաջարկութիւն արված է և միւս գործա-կաներին, ներկայացնում է իր գններ՝ պայման-ներին հետ միասին: Երբեք կողմից էլ առաջարկ-ված գները միմեանցից բաւական տարբերվում են: Ամենաթանգ գին նշանակում է Նօրէլը, ապա Բօտչիլը և Մանթաշան:

Եւ ահա հէնց այդ հանգամանքը իսկապէս ա-ռիթ է տալիս այն լուրի տարածվելուն, իբր թէ մեր գործակալները արդէն սկսել են արտա-սանձանեան շուկաներում իրար դէմ մրցել: Վերջապէս լուրը հասնում է ֆինանսների մի-նիստրին, որը գործի հանգամանքները քննելով՝ իսկոյն և ի՞նչ հեռագրով պատուիրում է դաշնակ-ցութեան Բաթումի փոխարէն Բօտչիլըին և Մանթաշանին յետ վերջին իրանց առաջարկու-թիւնները, քանի որ Նօրէլ վաղուց արդէն Սեր-բիայի կառավարութեան հետ այդ մասին բա-նակցութեան մէջ է մտել և հաւանական է, որ գործը կաշկերցի աւելի ձեռնառու գնելով և պայմանով:

Ինթերցողը արդէն ինքը կարող է եզրակացնել, որ այստեղ նախամտածած մրցումն, բառի լուծն

Իր ամուսնութենէն վերջ, ամուսնու և մօր պարտ-քերը լիովին կատարելէ յետոյ, ժամանակ կը զրտ-նէր դու հասարակական գործերով զբաղուելու: Ճորտերի աղաւթութիւնը կատարուած տեսնելէ վերջ, նոյն եռանդով և աւելի փորձուած ուժերով սկսաւ աշխատել և ձայնը բարձրացնել կանանց ընտրութեան իրաւունքին համար: Այդ դատին համար նա ձաքայնեց Միացեալ-Նահանգաց ամեն հեռավոր անկիւնները, շատ տեղեր կնոջ մը առեւ-նախօսելու առաջին անգամը տեսնելու բաղձա-քով՝ ժողովուրդը կը խռէր իր շուրջը: Նա ան-վիճելի կը իրօսէր ամենուն, իր անձնուիրութեան օրինակը, համարձակ ձայնը, անկեղծ շնորհը, հաստատ համոզումները, գրաւիչ երեւոյթը առեւ-նաբանի մը համբաւ ստեղծեցին իրեն համար:

Լուսի Պլաքսին՝ Ամերիկեան հաւասար իրա-ւանց ընկերութեան առաջին հիմնադիրներէն ե-ղաւ, որոյ գործն վարչութիւնն առեւաբանի պաշ-տօնը կատարեց երկար տարե-ամենայն յաջողու-թեամբ: 1866-ին կաղմակերպեց Ամերիկայի կա-նանց ընտրութեան ընկերութիւնը, ժամանակակից նշանաւորագոյն մարդոց և կանանց ընկերակցու-թեամբ: Այս ամեն կաղմակերպութեանց ներշն-չող ոգին, կանանց իրաւանց հզօր պաշտպան ու անոյնան լինելէ վերջ՝ անցեալ տարի նոյեմ-բերին մեռաւ՝ իր նշանաւոր դատեր և այլոց կտակելով շարունակել իր սկսած ագիտ. գործը:

Այսօր Ամերիկայի Միացեալ-Նահանգաց կէտ, 40,000-էն աւելի կին ընթացաւարտներ են, կրթական ամեն հաստատութիւնը բաց են քն-քայ սեռին առջև, շրջադեպտ հագնողներ հաւա-սար իրաւունք ունեն կրթական, գիտական, կրօ-նական և ընկերական խնդիրներու մասին հրա-պարակաւ խօսել ու վիճել: Այլ ևս չը կայ Լու-սին, բայց իր սկզբունքները անմահացած են, իր դատը հաղաբար համակրողներ գտած է ամեն տեղ. իր յաջողները յաջողութեան նոյն յոյսով ոգեւորուած՝ յառաջ կը մղեն իրենց գործը:

Հրանտ

նշանակութեամբ, չը կայ, այլ հասարակ մի թիւրի- մայութիւն է, առաջացած մեր գործակալներէ անփորձութիւնից, որին մասամբ նպաստել է Սեր- բիայի կառավարութիւնը:

Եւ իսկապէս, Սերբիայի կառավարութեան ինչ կարիք կար դիմել զաշխարհային գործակալնե- րից իւրաքանչիւրին առանձին առանձին, քանի որ նրանք քաջ յայտնի էր, որ այդ երեք ֆիրմա- ներն էլ ներկայացուցիչ են ուստաց կերտման- գործնորդի, միայն զանազան երկրներում, և ի- լաւունքը չունեն տարբեր գներ առաջարկելու: Դա պէտք է բաւականաւոր մէկին միայն դի- մելով, այն էլ նրան, որը միտ է—այսինքն Նո- րելին: Իսկ մեր գործակալները, չնորհիւ իրանց միամտութեան և անփորձութեան, միտանալով թէ մի այդպիսի միջադրացին առեւտրական կամ իրա- ցիա դժուար է միայնակ անել, և հարկ կայ ան- պատճառ խորհրդակցելու միմեանց հետ, կու- րացած լինելով լոկ փառաբանութեան զգացու- մով՝ ծածուկ կերպով գործը կատարեցին և վեր- ջը, երբ պարզվեց, այդպէս խայտառակվեցին:

Ֆ. Մ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՕՅՏԻՆ

Ստացանք թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովետների օգտին:

1) Բազումից, Բազրատ Շխանից 200 ռուբլի, ի յիշատակ իր հանգուցեալ եղբոր՝ Ար- չակ Շխանի, այդ գումարից 100 ռուբլի պէտք ուղարկենք Կաղզուան, Բարեգործական ընկերու- թեան, իսկ 100 ռուբլի՝ ուր կամենանք:

2) Լ. Ի. Վաչից, Գաղստան, բժիշկ Գուկաս Մատոյանից, նրա միջոցով մի խումբ ծառայող- ների մէջ հանգանակված 9 ռուբլի, եթէ հնարա- ւոր է, Ստանի սովետներին հասցնելու համար: Տարաբաղաբար ոչ մի միջոց չը կայ Ստանի հասցնելու համար, ուստի յայտարարում ենք սո- վետներին ընդհանուր գումարներին:

Ուրեմն նախկին 907 ռ. 23 կ. հետ այժմ ու- նենք 1116 ռ. 23 կոպէկ:

Այսօր, սեպտեմբերի 8-ին, ուղարկեցինք:

1) Կաղզուան, Բարեգործական ընկերու- թեան տեղական ճիւղին, 100 ռուբլի, գաղթական սովետների օգտին:

2) Էջմիածին, Վեհափառ Կաթողիկոսին 150 ռուբլի:

Թիֆլիս, Բարեգործական ընկերութեան խոր- հրդին 100 ռ.:

Մեզ մօտ մնում է 766 ռ. 23 կ. Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 9085 ռ. 5 կ. Ուղարկել ենք 8319 ռուբլի:

ՆԱՄԱԿ ԶԱՆԳՆՈՒԹԻՅՈՒՆ

Օգոստոսի 29-ին

Գերբիսի մօտեցում, օգոստոսի 25-ին եկած սարսափելի անձրևը և կարկուտը ահալին մեծա- տուեցին, անձրևը և կարկուտը տեղից մօտ 1 1/2 ժամ և զբաղեցրեց զայսպէս ահալին հեղեղները քարու- քանդ արին Հալիճք, Շնհէր ու խոթ գիւղերի այգիները և կալերը և տարան լցրին Որոտնայ գետը: Հալիճք գիւղից հեղեղի զուռ են գնա- ցել, ըստի բազմաթիւ անասուններից, ինչ հողի 2 զուռի գետը մինչև այժմ էլ չէ գտնված. մի 10 տարեկան աղջկայ հանել են աւաղի տակից կի- սակներն և կուրացած: Խոթ գիւղից զուռ են գնացել հեղեղին երեք կին: Ասում են, որ Նայջի հայ գիւղից ևս երկու թէ երեք խիղճվածներ կան. վերջին լուրը դեռ չենք ստուգել: Եւ այժմ միակ աղբիւրը, որից գիւղացիները ջուր էին վերց- նում խմելու համար, քարուքանդ է եղած և ջրի սկը անհետացած է:

Տաթևից մինչև 50 զուռ և զգուրաւոր կենդանի- ներ են խեղդված և երկու ջրաղաց բոլորովն անհետացել են: Հալիճք, Շնհէր և խոթ գիւղե- րում դարաւոր ընկուզներն արմատախիլ են եղել:

Ստանայի բնական և նշանաւոր կամուրջի բերանը փակված է և Որոտնայ գետի ջուրը այ- ժմ ամբողջովին հոսում է կամուրջի վրայով և կազմում սարսափելի ջրվեժ:

Ստանայի կամուրջը, ինչպէս յայտնի է, կազմած է ստալաքտիտներից, դարերի ընթաց- քում ջրի այդ քարայրումն աւելանալով՝ բռնել է գետի երեսը մօտ 28 սաժէն երկարութեամբ և 10 սաժէն հաստութեամբ: Մինչև այժմ երբեք չէ պատահած, որ անցքը փակվի, ինչպէս պատ-

մում են ակնատեսները, կամուրջի անցքը փակ- վել է ընդ միշտ: Եթէ այս եղանակով ճշը մարիտ լինի, այն ժամանակ Գերբիսի կողմերի հաղորդակցութիւնը Տաթևի վանքի հետ կարելի է կտրած համարել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԹԻՐ

Կ. Պոլսից մեզ գրում են օգոստոսի 31-ից, Վրաստանի շահական լուրեր հասած են այս օրերս Մոսկւն, թէ ևս ոչ այնքան մանրամասն և ոչ ամեն մասամբ ստույգ, որովհետեւ գրեթէ ամեն կանոնա- ւոր հաղորդակցութիւն դաւաճներուն հետ կը- արժանանա, և և ճամբորդներ ալ հազուադրու են: Անցեալ անգամ մեր նամակի մէջ յիշված Մոսկւի ապստամբութիւնը կը ստուգուի՝ փաղաքին մէջ գործ գտնուած չէ խռովութիւնն սկսած պահուն, միւս կողմէն իսկայն հեռագրած է ուր որ անկ է զինուոր հասցնելու: Արեւմտեան ընդհարումը մը և- դած է հայերուն և թիւրքերուն միջև. երկու կողմէն ալ բազմաթիւ զոհեր: Մանրամասնութիւն- ներ կը պակսեն:

Երկուշաբթի երեկոյան, սեպտեմբերի 5-ին, Թիֆլիսի քաղաքային դուման, ընկնելով ճայտաւոր- ներից կազմված յանձնաժողովի գեկուցումը, այն է միջնորդել պետական կառուածներին միմիկտոր առաջ՝ պոլիտեխնիկական բարձրագոյն դպրոցը բա- նալու մասին մեր քաղաքում, ընդունեց այդ յանձ- նաժողովի որոշումը:

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստա- ցանք. Արգարիից, Յակոբ Ելիշիկեանից 4 ռուբլի: Ուրեմն նախկին 3501 ռ. 72 կ. հետ այժմ ունենք 3505 ռուբլի 72 կոպէկ:

Լօնդոնից մեզ գրում են, Վեհափառ օսմա- նեան զետեղանք արտաքին գործոց մինիստրութեան հաղորդեց սովետին որոշումը՝ աղատ արձակելու Խոջաբեկի գեղացիին առթիւ բանտարկուածները, իսկ մասնաւոր դատաւարութեանը դատը վե- րաքննութեան ենթարկել: Սրբ Կրէյ պատասխա- նեց զետեղանքին, թէ թաղուհուկ կառավարութիւ- նը խիստ գոհ մնացած է սովետին այդ որոշու- մէն:

Ռուսաստանի առեւտրական յարաբերութիւն- ները Պարսկաստանի հետ բարոյացելու համար ֆինանսների մինիստրութիւնը մտադրութիւն ու- նի աւելացնել հիւպատոսների թիւը Պարսկաս- տանում:

Մանկավարժական «Մասիս» թերթի խմբագրու- թիւնը, ինչպէս երևում է նրա տպագրած յայ- տարարութիւնից, յանձն է առել մի օգտաւէտ գործ.— ուսուցիչներին և դպրոցներին մէջ միջնորդ լինել, դպրոցների համար ուսուցիչներ և վար- ժուհիներ գտնել, իսկ վարժուհիներին և ուսու- ցիչներին համար՝ պաշտօն դպրոցներում: «Մա- սիս» անօրէնութիւնը յայտարարում է մի և նոյն ժամանակ, որ այդ յանձնարարութիւնները կը կա- տարի առանց չոր և է փոխարինութեան: Միթէ աղգային դաստիարակութեան նուիրված հանգստը կարծել է երբ և իցէ, թէ այդպիսի գործերի համար կարելի է և «փոխարի- նութիւն» պահանջել...

Ստացանք «Пекспиръ и его трагедій» վեր- նագրով ռուսերէն մի գիրք, հեղինակութիւն Ա. Երիստովի: Այդ գիրքը մի վերնաթերթիւն է Դեքտայի «Մալիս», «Օւալիս» և «Համալիս» տրագիդիաների և գրված է հեղինակի ասելով, ա- չակերտների համար: Տպված է Բագուի «Արօր» տպարանում և գինն է 25 կոպէկ: Եւ այժմ է կենտրոնական գրադատականոցում:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են, Հանգուցեալների յիշա- տակին բարեգործական նպատակով նուէրներ տա- լը տարածվում է և՛ Կարսում: Անցեալները տե- դացի վաճառական Յարութիւն Մովսէսեանից իր հանգուցեալ մօր յիշատակին նուէրից հայաց ու- սումնարանին 80 ռուբլի և Բարեգործական ըն- կերութեան ճիւղին՝ 20 ռուբլի:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, «Մեր հինգ դպրոցների միացեալ հոգաբարձութիւնը այժմ

արդէն մտել է իր իսկական դերի մէջ: Հոգաբար- ձուները յետ ստացան այն լիազօրութիւնը, որ օ- րագրութեամբ յայտարարել էին նախագահին: Այդ առաջին թէկուզ խոշոր՝ սխալ քայլը, ինչպէս և հարկաւոր էր, չը վնասեցրեց նրանց՝ ետանդով և օգտաւէտ կերպով գործն առաջ տանելու, և այժմ ամեն ջանք գործ են դնում զարգացնելու բարեկեցիկ պայմանների մէջ զինք: Հոգաբարձու- ների մէջ կան նոյն իսկ կրթված, ինտելիգենտ երիտասարդներ, որոնք յոյս են տալիս մեզ՝ ա- ռւհետեւ, իրանց նախագահով հանդերձ, աւելի ա- չաւոր զգոնելու: Մինչև այժմ ոչ մի հասարա- կական գործի մէջ մտած չը լինելով, սրանց հա- մար հոգաբարձական պաշտօնը՝ այսպէս ասած՝ առաջին դէպքն է. աշխատելու են, ուրեմն, պատուով վարելու այդ պատասխանատու գործը: Իսկ հասարակութեան վրա ծանր պարտք կայ ամենախիստ կոնսերւիւ ենթարկել այն անհասնե- րի գործունէութիւնը, ինչն զրանք հոգաբարձու- թէ առաջ-ուսուցիչ և այլն, որոնց յանձնված է իր դպրոցները կառավարելու զեկը:

ԳԵՐԲԵՆԻՑ մեզ գրում են, Օգոստոսի 15-ին մի մանկական ներկայացում տրվում, որ օր. Յով- հաննիսեաններին, Մակարեանի և պ. Զարգրեանի նախաձեռնութեամբ, մուտք կըսւ 67 ռուբլի: Երկր զուր գալով 19 ռուբլի, մնացած գումարը յայտարարվեց՝ կէսը ծխական երկուս դպրոցի օգտին, կէսն էլ այստեղի հայոց բեմին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԳԼԻՍՈՒՄ

Վաղուց է ինչ Անգլիայում վիճաբանութիւն- ներ են լինում այն մասին, թէ Անգլիայի երկու համալսարաններից որն է աւելի բարձր.— Օկս- ֆորդը, թէ Կեմբրիջը:

Այդ առիթով Լոնդոնի մի ամառից առաջ է բերում մի ամբողջ ցուցակ զանազան մեծ մարդկանց՝ աւարտած թէ մէկ և թէ միւս հա- մալսարանները: Դա շատ հետաքրքիր ցուցակ է. նրանից երևում է, որ Օկսֆորդը թէ ևս աւելի է հասարակութեանը աւելի մեծ թիւով բանա- ստեղծներ և, բայց նրանք յաւելութեամբ աւելի- ցածր են Կեմբրիջի տուած բանաստեղծներից: Այսպէս, օրինակ, եթէ Օկսֆորդը կարող է պար- ծնալ, որ աւելի է Շելլի և Սվիքսոն, միւսը՝ Կեմբրիջը ոչ պակաս կարող է պարծնալ, որ տուել է Միլտոն, Դրայդեն, Վորթսթոր, Կոլերիջ, Բայրոն և Տենիսոն: Գրական աշխատանքի և պատմագրի բնուէրի կողմից առաւելութիւնը Օկսֆորդին է, թէ և լիպասաններին մեծ մասը աւարտել է Կեմբրիջի համալսարանը: Գի- տութեան և փիլիսոփայութեան մէջ Օկսֆորդը չէ տուել և ոչ մէկին՝ հաւասար Կեմ- քիջի փառաւոր երրորդութեան. Բէկոնի, Նիւ- տոնին և Դարվինին, բայց բարձր կառավար- չական մարդկանց կողմից՝ առաջին դար- նին այնու ամենայնիւ պատկանում է Օկսֆոր- դին:

Անգլիական ամառից, իրան յայտնի անուն- ներից ընտրելով 12 անուններ թէ մէկ և թէ միւս համալսարանում աւարտածներից, տը- բամաղիր է սակայն համեմատական առաւելու- թիւնը տալ Կեմբրիջի համալսարանին: Այս այդ փառաւոր անունների շարքը՝ Օկսֆորդի համա- լսարանում, նրա գոյութեան օրից, ուսել են՝ Վիկ- լիֆը, Վոլթսը, Բալլը, Գամբլը, Զատամը, Ալիսոնը, Զոսմոնը, Ալամ Սմիթը, Գիբսը, Շէ- լին, Նիւմանը և Մատիւ Քլեյնը, իսկ Կեմբրիջի համալսարանում.— Միլտոնը, Բէկոնը, Կրամպլը, Զերեմի, Տէյլորը, Նիւտոնը, Դարվինը, Սպենսը, Բայրոնը, Վորթսթորը, Պիտը, Մակոլէյը և Տե- կեմբը:

Անգլիական մի ուրիշ ամառից այդ տեղեկու- թիւններին կցում է մի ուրիշ շարք տեղեկու- թիւններ այդ մի և նոյն համալսարանին ե- րի ներքին կեանքի վերաբերմամբ, այն է ուսա- նողական գրական— հասարակական պայքարի մասին: Ռուստոններին այդ ակումբները ամենայն իրաւամբ կարող են մի- մի պատրաստական զըպ- րոցներ համարվել ապագայ բարձր պարտմն- տական գործողների համար: Հաշուած է, որ ներ- քին պալատի անդամներից գրեթէ մի հինգերոր- ղականը և վերին պալատի անդամներից մի նը- չանաւոր մասը ամենից առաջ սովորել են խօսել Օկսֆորդի ուսանողական ակումբում:

Օկսֆորդի ակումբը, որ գոյութիւն ունի 1823 թականից, ունի այժմ 900 իսկական և 20,000 մշտական անդամներ իր նախկին սաներից, ո- րոնցից տարեկան միջին թիւով անդամակցական վճար է մտնում ընկերութեան կասսան մօտ 3,000 ֆունտ ստերլինգ:

Հետաքրքիր են այդտեղ տեղի ունեցող վիճա- բանութեան ձեերը. նախ և առաջ զուրս են դալիս 4 հետերներ, որոշ կերպով հաղված, որոնցից երկուսը իրաւունք ունեն խօսել միայն 25 րոպէ, իսկ միւս երկուսը՝ 20 րոպէ, իսկ հասարակու- թեան միւս անդամները, նախագահի թոյլտու- թեամբ, կարող են խօսել ոչ աւել 15 րոպէից: Գահիճը, որտեղ տեղի են ունենում այդ վիճա- բանութիւնները, ունի դեղեցիկ կարասիք, էլեկտ- րական լուսաւորութիւն, զարդարված է ընկերու- թեան բոլոր նախագահների լուսանկարներով: Նախագահի կարգադրութեամբ շատ անգամ հրա- շարվում են մասնակցելու ուսանողական վիճա- բանութիւններին և բարձրագոյն քաղաքական գործիչներ, այնպէս որ ուսանողները, դեռ իրանց զրանգաններից չը հեռացած, ոչ միայն ընտելա- նուծ են լսել փայլուն հետերների փայլուն ճա- ուերը, այլ և՛ սովորում են նոյն իսկ ճակատա- մարտել նրանց հետ դասարանից ոչ հեռու... 2ը կայ մի հարց հասարակական—քաղաքական զի- տութիւնների մէջ, որը մանրակրկիտ կերպով ըննված չը լինի Օկսֆորդի ուսանողական ակում- բում, նրա 71-ամեայ գոյութեան ընթացքում:

Նախագահի պաշտօնը խիստ յարգելի պաշտօն է ուսանողների աչքում. ձգտել հասնել այդ բարձրութեան՝ նրանց համար մեծ փառք է, իսկ այդ նախագահներին թուում, ի միջի այլոց, եղել են՝ Գլադստոն, Մանինգ, Գլիֆթերն, Ասկլիտ (նրբին գործերի ներկայ մինիստրը), և այլն:

Կեմբրիջի ուսանողական ակումբը տարբերով ա- լելի մեծ է Օկսֆորդի ուսանողական ակումբից. նա հիմնվել է 1815 թ., ունի մի անգին բնա- կարան, 10,000 ֆ. ստերլինգի արժողութեամբ, ունի հարուստ մատենադարան, 25,000 հատոր գրքերով, գեղեցիկ քլիմական լաբորատորիա և այլն: Նրա անդամների թիւը տարուց տարի ա- լելուում է. միջին թիւով 400-ից մինչև 500 մարդ տարեկան: Վերին պալատի անդամներից 45-ը, որոնց թիւում և Ուէլիս իշխանը և Ներ- քին պալատի անդամներից 58-ը, Կեմբրիջի նախկին սաներ են: Ինչ վերաբերում է նրա ներքին կարգերին՝ նրանք մի և նոյնն են, ինչ—որ Օկսֆորդի ակումբում: Այդ երկու ակումբների մէջ գոյութիւն ունեն ամենաբարեկամական և հա- մերայն յարաբերութիւններ. քիչ չէ պատահում, օրինակ, որ մի ակումբից հրաւիրվում են միւս ակումբը յայտնի տաղանդաւոր հետերներ և հակառակը:

Այդ հաւաքական խորհրդածութիւններից ամե- նահետաքրքրականը տեղի է ունեցել 1829 թ., երբ Կեմբրիջի ակումբը ուղարկել էր Օկսֆորդի ակումբը մի պատգամաւորութիւն՝ ընկնելու այն խնդրի՝ թէ ով է առաջին պօստ, — Բայրոնը, թէ Շելլին: Այդ հետաքրքիր պատմական խորհրդի վիճաբանութիւններին մասնակցել են, ի միջի այլոց, Գլադստոն, Մանինգ, Միլտոն և Մանինգ:

Ապագայ նշանաւոր հետերներից կարելի է մատնանիլ ինչն՝ Մակոլէյի, Տրեվիսի, յայտնի անտեսագէտ Ֆոսթերի և սրբ Զարդ Գիլիէրի վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԹԻՐ

Բերլինից հեռագրում են սեպտեմբերի 1-ին, Հէլեոպոլի թաղումը շատ հանդիսաւոր էր Պաշ- տունական շրջանների շքեղ պատկեր ուղարկեցին: Գերմանական կայսրը վարդապետ իր ներկայացու- ցիչն ունէր: Թաղմանը անձամբ ներկայ էին Բեր- լինում գտնված բոլոր մինիստրները և համալսա- րանի բաղմամբիւ պրոֆէսորները: Ներկայ էին քաղաքային վարչութիւնների ներկայացուցիչները, որոնց թիւում և Հէլեոպոլի քաղաքապետը պա- կով: Բաղմամբիւ համալսարաններ և ակադէմիա- ներ ուղարկել էին ծաղիկներ և պսակներ՝ դա- դաղի վրա դնելով: Կայսրը, այրի կայսրու- հին և Բաղէրի մեծ դուքսը շքեղ պսակներ ու- ղարկեցին:

Լոնդոնից, օգոստոսի 31-ին, Վրաստանի գոր- ծակալութեանը հեռագրում են. «Այսօր կէսօրից յետոյ տեղի ունեցաւ Պարզի կամի թաղումը: Ներկայ էին Ուրեմնեան ընտանիքի բոլոր ան- դամները, բացի իշխանուհի Կեմեմեմիայից: Պա-

